Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2018 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **6** տպագիր և **2** դատարկ էջերից:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

1. *Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը, երկհնչյունները:*

Ուղիղ լուսամուտիս առաջ աճում, բար□րանում էր մի մար□ահասակ ***եղևնի***: Ամեն առավոտ երբ մոտենում էի լուսամուտիս իմ առա□ին հայա□քն ընկնում էր դրա վրա և նա ասես ժպտում էր ինձ իր կանաչ հանդեր□ներով, ժպտում էր մանավանդ ***ձմռանը***:

-Տեսնու՞մ ես,- կարծես ասում էր նա:- Ես ցրտից չեմ վախենում:

Նայելով նրան ես նույնպես ժպտում էի: Նա իսկական կտրի□ է չի երկ□նչում ո՛չ քամուց, ո՛չ ձ□նից, ո՛չ սա□նամանիքից... Ու ինձ համակում էր մի ուրախ ***զգացում***:

Ահա թե ինչպիսին պետք է լինել:

Եվ ձմռան ցուրտը, բուքը սարսափելի չէին թվում ինձ:

Ինչպե՞ս է դիմանում փոքրիկ ծառը: Ոչ միայն դիմանում է. չի ընկ□ճվում բնավ: Աշխար□ին նայում է միշտ ուրախ, միշտ զվար□... Ու փոքրիկ ծառը դառնում էր ինձ սիրելի, այնքան սիրելի, որ թվում էր հարազատ, և ուզում էի, որ նա մնա միշտ այդպես լավ ու խիզախ:

Բայց այս□ր կես□րին սովորականի պես մոտենում եմ լուսամուտիս եղևնին չկա: Այո՛ նա իմ կանաչ եղևնին չկա...Նրա տեղում մնացել է ***սղոցով*** կտրած բ□նը:

Ի՞նչ է պատահել... Նայում եմ իրարից հեռու տնկված եղևնիներին նրա հասակակից, սիրունատես եղևնիներին: Նրանք կանգուն են: Ինչպես միշտ կանաչազգեստ, կատարները խրո□տ վեր պարզած:

Իսկ իմ եղևնին: Ո՞վ է կտրել նրան և ինչու՞....

Մտածում եմ ու գտնում հանկարծ: Վաղը Նոր տարի է: Կտրել-տարել են, որ տոնածառ սարքեն: Ու միտքս գնում է կտրող-տանողի ***տուն*** ինչպե՞ս է զգում նա այդ ծառի առա□, ծառ, որին զրկել է կյանքից մի քանի օր ուրախանալու համար:

Իսկ դե□ատի ծառը որ տարին բոլոր ուրախացնում էր ամենքին հիմա չորս պատերի մեջ մեռնում է զար□արված:

Եվ քանի հազարա□ներ այդպես... **5 միավոր**

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

2. Տեքստում կան կետադրական բացթողումներ. լրացրու՛ դրանք: 2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները, գրի՛ր ևս մեկ հոմանիշ.

քամի ----------

խիզախ ----------

ուրախ ----------

վախենալ ----------

2 միավոր

4. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

արմատ+ վերջավորություն----------

արմատ+վերջածանց ----------

արմատ+հոդակապ+արմատ ----------

արմատ+արմատ ----------

արմատ+ ածանց + հոդակապ+արմատ----------

2,5 միավոր

5. Տեքստում գտի՛ր այնպիսի բարդ բառ, որն ունենա ածականով արտահայտված արմատ: Դու՛րս գրիր այդ բառը և արմատը ընդգծի՛ր:

0,5 միավոր

6. Տեքստից դո՛ւրս գրիր 1 սոսկածանցավոր բայ և կազմի՛ր այդ բայի հրամայական եղանակը, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը (բայերը գործածի՛ր եզակի թվով, դրական և ժխտական խոնարհումով):

Սոսկածանցավոր բայ ----------

հրամայական եղանակ ----------

անցյալ կատարյալ ----------

1,5 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

7. Դո՛ւրս գրիր տեքստում ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

---

3 միավոր

8. Տեքստից դո՛ւրս գրիր

ա. պարզ համառոտ մեկ նախադասություն և ընդարձակի՛ր:

բ. միակազմ մեկ նախադասություն:

1,5 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Ինձ՝ որպես բնապահպան, քչերն են ճիշտ հասկանում:

բ. Պետք է ծանոթանաս բնության հետ, նրա ամեն թուփ ու ծաղկի հետ, որ ճանաչես ու սիրես:

գ. Ինձ թվում է, թե իմ հոգատար վերաբերմունքի համար բնությունը շնորհակալություն է հայտնում ինձնից:

դ. Նա ինձ իր երախտիքի խոսքն է ասում գեղեցկանալով, փթթելով, օր օրի առավել ծաղկուն դառնալով:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Լեզվամտածողություն

1. *Հակիրճ շարադրի՛ր մտքերդ Հայաստանի բնության պահպանության մասին*:

---

3 միավոր

2. *Ի՞նչ կպատմեր եղևնին հեղինակին:*

---

3 միավոր

3. *<u>Բնութագրի՛ր եղևնուն՝ օգտագործելով տեքստում տեղ գտած բառերը:</u>*

---

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

4. *Ինչպիսի՞ն պետք է լինի մարդը՝ ըստ հեղինակի:*

---

2 միավոր

5. *Գրի՛ր չորս դարձվածք՝ գույների անուններով:*

---

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԴԱՏԱՐԿ ԷՋ

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԴԱՏԱՐԿ ԷՋ

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն